


## ԶԵՐԵԶԱՍ. Ա.ՐՕՐԱԳԻՒՐ ՇՈԴԵՇՈՐ ԳՈՐԾԻՆ

Եթէ մէկն ըսելու ըլլայ՝ թէ ներկայ դարս՝ գար է փորձառական մեքենան կանութեան, պարզ և յայտնի ճշմարտութիւն մ"ըսած պիտի ըլլայ. Մեքենականութիւնն ամէն տեղ կը մտնէ. նախ ձեռագործական արուեստից առաջ պարէզը մտաւ, և կրնայ ըսուիլ՝ որ հիմայ ամենայն ճարտարարուեստով՝ մեքենայինք կը կատարուին. որով կարգն եկած է երկրագործութեան, և այս

ասպարիզին մէջ ալ մեծ յառաջադիմութեամբ կը մրցի: իտալիա՝ որ թէպէտ նոյն ասպարիզին մէջ մրցողաց յետամիացներէն մինէր, բայց որէ որ մեքենական երկանց մէջ հաշակ կը ստանայ. և այս վերջին ժամանակներու Զերկալա արօրագիր շոգեշարժ մեքենայով՝ փառաւոր փորձ մը տուաւ իր այս զարդացման: Այս արօրագիր մեքենայն ընդունե-



Ձերիւս արօրագիր շոգեշարժ դորձին:

լութիւն պիտի դանէ ամէն յառաջաց ցեալ ազգաց մէջ, մրցելով Հովարտի առասանաւոր մեքենային դրութեան հետ. որոյ կը վկայէ իտալիայ երկրագործութեան, արուեստից և վաճառականութեան պաշտօնէին նոր որոշողութիւնն, որ Դուրինի համազարյակին արուեստահանդիսին մէջ՚ի ցցց դրուած արօրագիր մեքենայից վրայ արուած

վճռոց համեմատ, չնորհեց թիայենցացի Պ. Գեարոս Զերեզայի՝ արծաթի միտալ մը և 3000 ֆրանք առ ՚ի վարձ: Իտալից մեքենական յաղթութիւնն յայսմ կը կայանայ՝ որ այս գործին կատարելագոյն է քան զանգիտական մեքենայն Հովարտի, որ մինչև հիմայ այս տեսակ մեքենայից մէջ ամենէն աւելի լաւագոյնն, յարմարն և զօրաւորն

կը համարուեք: Թէպէտ Հովարտ ալ արծաթ միսալ ընդունեցաւ ՚ի մըրց-  
ման, բայց 1000 ֆրանք միայն վարձք  
ընդունեցաւ: Եւ այս յայտնի կը ցու-  
ցընէ՝ որ Զերեզա ահաւոր և գժուա-  
րայալի՛ ախոյիեան մ'ունէր ՚ի Հովարտ:  
բայց այսու հանդերձ իւր մեքենայն  
յաղթեզ:

Հոս ճշգրիտ պատկերը կը ներկայա-  
ցնենք անոնց՝ որ կը փափաքին ճանչ-  
նալ և աշքի առջև ունենալ այս վար-  
ձատրեալ մեքենային ստուերազիծը,  
համառօս նկարագիր մ'ըներով:

Լուծանելի ամենէն դժուարին խըն-  
դիրներէն մին էր՝ անիւները այնպէս  
շինել՝ որ հողին մէջ չըրին, և Զերեզա-  
գերազանց կերպով լուծեց զայս, շար-  
ժի անիւները լսյն շղանակօք շինե-  
լով։ Եւ որպէս զի մեքենան կարենայ-  
նակ թաց և սիզաւէտ երկրի վրայ ևս  
գործել, անուոց շրջանակներն այնպէս  
շինեց, որ ըստ պիտոյից՝ ամենայն դիւ-  
րութեամբ կարենան սուր ծայրեր և  
կամ երկածեայ կտրոցներ յարմար-  
ցուիլ, որոնք անուոց ճառագայթից  
ուղղութեամբ ցցուած են. և այս ցը-  
ցուեալ մասունքն երկրի մէջ թափան-  
ցելով՝ անուոց թէ երկրի վրայ սահիլը  
կ'արգելուն և թէ միանդամայն ինքն-  
իրենց վրայ շրջիր։

Տարբերական անուղղ դրսթիւն մը,  
որ շարժիլ անիւներուն հաջրգուած  
է, կը դիւրացընէ մեքենագործին ուղ-  
ղելու շոգեցարժ մեքենան՝ որ և իցէ  
շարժմամբ և կամ թաւայմամբ, ա-

ուանց բնաւ ժամանակ կ որսնցընելու :  
Բազմարօրն՝ մեքենային հետ շղթա-  
ներով միացած է, և կողմնակի երկայ-  
նութեամբ՝ մեքենային առանցից ուղ-  
ղութեան վրաց դրուած, այնպէս որ ա-  
րօրուած հողն՝ յաջորդ շրջանին մէջ  
կրկին չ'արօրադրուիր, Դիւրավար լը-  
ծակի մը ձեռօք՝ հողագործն կրնայ  
կանոնաւորել աշխատութեան խրու-  
թինը, և կամ արօրադրութիւնը ընդ-  
միջել կամ զարդեցնել, առանց ամե-  
նեին մեքենային ընթացից ընդհատու-  
մրն պատճառելու :

Օրուան մէջ երկուքէն մինչև չորս հարիւրակալ կրնայ արօրադրել գործին, 15-40 հարիւրադամեղր խորովթեամբ, կիսով շափ աւելի խնայողութիւն կ'ըլլուի ծախուց, կենդանիեաց միջոցով եղած արօրադրութենէն. թէ զիշեր և թէ ցորեկ կրնայ գործածուիլ այս մեքենայն, նաև փոքր անդաստանաց մէջ, նոյն իսկ նաև երբ ծառոց շարքեր գըտնուին անսոնց մէջ:

Պ. Զերեղա Քոսդայի մեքենայն կըր-  
նայ նաև առասանաւոր գրութեամբ ա-  
րօրադրել, երբ անձրեխ ժամանակ և  
կամ ճախճախուտ երկիրներու մէջ  
գործածուի. կրնայ ծառայել նաև սո-  
վորական ճամբաներու վրայ կառաց  
փոխադրութեան, ցորեն ծեծելու, չոր-  
ցընելու, աղալու, փայտեր սղցելու, և  
ուրիշ սր և իցէ աշխատութեանց, սրոնք  
կարելի են նաև սովորական շոգեշարժ  
մեքենաներով կատարուի:

